ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Փարիզ, Ֆրանսիա, 04.04.2011 թ.

Հարգելի պարոն Կարեն Միքայելյան,

Շնորհակալություն նամակի համար շատ եմ ցավում, որ նամակին չկարողացա ավելի շուտ պատասխանել, շատ աշխատանքներ կա անելու եւ ժամանակը չի բավարարում:

Ձեր առաջարկությունը իրոք շատ կարեւոր է մեր աշխատանքների համար, կուզենայի Ձեզ տեղյակ պահել մեր որոշ աշխատանքների մասին, որոնք իրականացնում ենք այս պահին:

Ազգային Խորհրդի Իրավաբանական հանձնախումբը մշակում է Գործադիր մարմնի աշխատակարգի վերաբերյալ փաթեթը, որը հնարավորություն կտա գործադիրին կարճ ժամանակահատվածում իրականացնել կառավարությանը հատուկ գործառույթները:

Ազգային Խորհրդի իրավաբանական հանձնախումբը նախապատրաստել է նաեւ հայտարարություններ, որոնք մինչեւ ապրիլի երրորդ տասնօրյակը կդրվեն շրջանառության մեջ պաշտոնապես:

Մի քանի նկատառում գաղափարական եւ գործնական առումներով.

Ազգային Խորհուրդը չի ընդունում, « արեւմտահայ » տերմինը, այն պարզ պատճառով, որ « արեւմտահայ » նշանակում է հայ, որը ապրում է արեւմուտքում, իսկ մենք լավ գիտենք՝ մենք հայերս ապրում ենք արեւելքում եւ մեր երկրի մի հատվածը պայմանականորեն կոչվում է Արեւմտյան Հայաստան: Արեւմտյան Հայաստանի հայը բնիկ է, նա որեւէ ձեւով, նույնիսկ քաղաքական առումով, կապված չէ արեւմուտքի եւ « արեւմտահայ » տերմինի հետ, « արեւմտահայ » տերմինը մեզ համար անընդունելի է, ինչպես քաղաքական, այնպես էլ պատմական առումներով:

Աշխարհի տարբեր ծայրերում, տարբեր կազմակերպություններ շուրջ ինը տասնամյակ նախապատրաստում են կոմիտեներ, որոնք իրապես փորձում են կազմակերպել հայապահպան աշխատանքներ սփյուռքի մեջ: Այդ աշխատանքների իրական արդյունքները հանրությանը հայտնի են եւ այդ իսկ պատճառով մենք գնում ենք այլ ճանապարհով, որը մեր համոզմամբ ավելի իրական է եւ անմիջապես կապված է մեր բնիկության եւ հայրենիքի հետ:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը ընդհանրապես այս պահին բավարարված է անցկացված համագումարների քանակով եւ նախնտրում է աշխատանքի կազմակերպման այնպիսի ձեւաչափ, որն ավելի արդյունավետ է:

Արեւմտյան Հայաստանի խնդիրներին առնչվող ցանկացած հարց շատ բարդ եւ չափազանց պատասխանատու գործ է, որ իրոք պահանջում է լուրջ աշխատանք հայեցակարգային, կազմակերպչական եւ ֆինանսական ասպարեզներում, սակայն պետք է

նաեւ նկատի ունենալ, որ հարկավոր է իրական աշխատանք տանել իրական հարթության վրա:

Առաջարկում ենք Ձեզ եւ Ձեր հարգելի ընկերներին, որոնք ներկայացնում են Միջազգային Կազմակերպչական Կոմիտեի աշխատանքները՝ մասնակցել Արեւմտյան Հայաստանի կառավարության աշխատանքներին, նստավայր Փարիզ, Ֆրանսիա: Հույս ունեմ, որ դուք նույնպես մտահոգ եք Արեւմտյան Հայաստանի եւ Արեւմտյան Հայաստանի Հայերի ապագայով:

Հարգանքներով՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի նախագահ
Արմենակ Աբրահամյան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդ
Email : stat.gov.wa@haybachdban.org